

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2017-7-1-Ա

ք. Երևան

06.12.2017թ.

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2017 թվականի դեկտեմբերի 6-ի նիստում քննարկեց 2017 թվականի նոյեմբերի 14-ին արտոնագրային հավատարմատար Արարատ Գալոյանի կողմից ներկայացված՝ JAPAN TOBACCO INC. (2-2-1, Toranomom, Minato-ku, Tokyo, Japan) ընկերության բողոքը «LESS SMELL AROUND YOU» (No20161669) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մականշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման Հայաստանի Հանրապետությունում միջազգային գրանցման հիման վրա պահպանվող «LESS SMELL» (Philip Morris Products S.A., Quai Jeanrenaud 3, CH-2000 Neuchâtel, (CH), IR-1180631, IR-1185601, IR-1187015) շփոթելու աստիճան նման ապրանքային նշանների առկայության պատճառով: ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 118-րդ կետի 1-ին ենթակետի, 125-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն համակցված ապրանքային նշաններին նման են համարվում ապրանքային նշանների այն տեսակները, որոնք որպես տարրեր ներառված են ստուգվող ապրանքային նշանի մեջ և այն նիշերը, որոնք ունեն գրաֆիկական նմանություն, որը որոշվում է ընդհանուր տեսողական տպավորությամբ: Տվյալ դեպքում համեմատվող

համակցված ապրանքային նշաններն ունեն բառային տարրերի նմանություն, այն է՝ «LESS SMELL» արտահայտությունը, որոնք ներառված են ապրանքային նշաններում նույն դիրքերով: Ինչ վերաբերում է Ձեր նկատառումներին՝ ապա համեմատվող ապրանքային նշանները զուգորդվում են ոչ միայն բառային տարրերով (LESS SMELL), որոնք ինքնուրույն պահպանության ենթակա օբյեկտներ չեն, այլ նաև ունեն գրաֆիկական նմանություն, այն է՝ 1. LESS SMELL բառային տարրերը ունեն միևնույն դիրքերը և համեմատվող ապրանքային նշաններում ներկայացված են իրար տակ, 2. աջ կողմում ունեն երեք եզրագծեր, որոնք նույնպես զուգորդվում են միմյանց հետ: Ապրանքային նշանները համարվում են ընդհանուր առմամբ զուգորդվող, եթե տվյալ նշանների հիմնական տարրերը կամ մասը համընկնում կամ կատարված են այնպես, որ տեսնելով դրանցից մեկը, միջին սպառողի մոտ առաջանում է նույն պատկերի, բառի, գույների, դրանց համակցության, իմաստի ընկալման զգացողություն, չնայած առանձին տարբերությունների առկայությանը: Ինչ վերաբերում է ձեր գրության մեջ հիշատակած հայտարարությանը, որ հրաժարվում եք «LESS SMELL» տարրի նկատմամբ բացառիկ իրավունքի հայտարկումից, տեղեկացնում ենք, որ կարգի 101-րդ կետի համաձայն չպահպանվող տարրի առկայությունն ու դրա հորինվածքային կապերը մնացած տարրերի հետ ապահովում են տվյալ ապրանքային նշանի տարբերակիչ հատկությունը, սակայն չպահպանվող տարրն այլ սուբյեկտների կողմից ևս կարող է բարեխղճորեն օգտագործվել: Այս դեպքում չպահպանվող տարրերն սպառողի մոտ չպետք է շփոթություն առաջացնեն տարբեր արտադրողների, նրանց գտնվելու վայրի, կամ ապրանքի արտադրության հարցում, որը տվյալ պարագայում շփոթություն է առաջացնում: Ինչպես նաև ցանկանում ենք նշել այն փաստը, որ հայտատուի կողմից նախկինում գրանցված (LSS LESS SMOKE SMELL, IR-853905) ապրանքային նշանը ունի այլ տեսք, տարբերվում է թե իր եզրագծերով, որոնք երկուսն էն, թե բառային տարրերով, որոնք ներկայացված են իրար կողք կողքի և ունի բառային տարրի տարբերություն՝ LESS SMOKE SMELL:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն ներկայացված և հակադրված ապրանքային նշանները շփոթելու աստիճան նման են գրաֆիկական առումով, որը որոշվում է ընդհանուր տեսողական տպավորությամբ: Տվյալ դեպքում համեմատվող համակցված ապրանքային նշաններն ունեն բառային

տարրերի նմանություն, այն է՝ «LESS SMELL» արտահայտությունը, որը ներառված է ապրանքային նշաններում նույն դիրքերով:

Բողոքարկողը մնաց իր տեսակետին, որ ներկայացված ապրանքային նշանը կարելի է գրանցել:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ որոշումն իրավաչափ է և ներկայացված ապրանքային նշանը ենթակա է մերժման:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել արտոնագրային հավատարմատար Արարատ Գալոյանի կողմից ներկայացված՝ «LESS SMELL AROUND YOU» (No20161669) համակցված ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՆԱԽԱԳԱՀ

ԳԱՐԵԳԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ